բերդի ընթանողք առանց հրամանի Տեառն շըրջապատողաց եթէ գտցի նա գող է և աւազակ, պարտ է նմայ որոնել զամենայն զոր ինչ պատճառէ մտանելն նմայ մէնջ շրջապատութեան, ընդունի դատաստան ըստ Օրինաց։

ԳԼՈՒԽ ՆՂԳ.

'Ի ժամանակի պատերազմի կերակուր, ոսկի, երծաթ, գործիք պատերազմի 'ի տանէ և 'ի յերկրէ հայոց առ տուն և յերկիր, և կամ բանակս թշնամեաց մտանելն արգելեալ իցէ, և ով որ գաղտնի մուծանէ, եթէ ըմբռնեսցի բանն աւար հարեսցի և այրն մտցէ բանտ և դատաստան ընդունեսցի ըստ արժանի գործոց իւրոյ։

ԳԼՈՒԽ ՆՂԴ.

Ով որ զինուոր 'ի կարգէ զինուորութեան 'ի պատիճանէ տանապետութենէ մինչև ցնախարարութեան եթէ ընդունեսցի նախատինս 'ի յումեքէ 'ի վերայ իւր և մնասցէ առանց վրէժխնդրութեան, իսկոյն անկցի 'ի կարգէ, զի ոչ կարցայ պահել պատիւ կարգ պատիճանի ազատութեան իւրոյ, բայց 'ի խելագար յանէ։

ԳԼՈՒԽ ՆՂԵ.

Բնականապէս 'ի մէջ բնութեան մարդոյ ծնեալ ունիմք զի բարկանայ ամենայն բնութիւնք